ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 249 – Ա

«ՀԱԼԻՃՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԼԻԱՆԱ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ՆՐԱ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՐԱՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով, ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով, հիմք ընդունելով Սյունիքի մարզպետի 2026 թվականի մայիսի 27-ի N 247-Ա որոշումը, 2025 թվականի հունվարի 24-ի N 02 պայմանագրի 5.1 կետի 5-րդ ենթակետը և կազմակերպության կանոնադրության 60-րդ կետը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

Լիանա Մկրտչյանի լիազորությունները՝ որպես «Հալիձորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող (այսուհետ՝ Համակարգող) դադարեցնել 2026 թվականի հունիսի 1-ից,

լուծել նրա հետ 2025 թվականի հունվարի 24-ին կնքված N 02 աշխատանքային պայմանագիրը, վերապահելով նրան նույն կազմակերպության Համակարգողի պարտականությունների կատարումը՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության Համակարգողի պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Մտորագրող
ՆԱՐԵ ՂԱԶԱՐՅԱՆ
6101900681

2026-05-29 13:04:56 GMT+4
Հավաստվում է ԷԼՏՈՍ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետին փոխարինող
Ն. Ղազարյան

2026թ. մայիսի 29
Ք. Կապան